

ՔԱՂՑԿԵՂ

«Քաղցկեղ ունի»:

Ռուսերը կ'իյնայ ու կը պայթի
Հէֆ մարդուն մէջ, որ դեռ երէկ՝
Կ'ապրէր առողջ անգիտութեան
Մէջ երջանիկ, եւ չունէր ցաւ:
Ինչո՞ւ գիտնար խեղճ մարդն աննար
Թէ մարմնին մէջ բոյն է դըրած
Անագորոյն ու անողոք
Ահեղ ախտն այս:

Իմաստունի խօսքն է նորէն

Որ մեզ կ'ըսէ. —

«Անգիտութիւնն երբ օրհնեալ է
Յիմարութիւն է արդ գիտնալ»:

«Քաղցկեղ ունի»:

Մահաւընիո մ'է անկասկած,
Գործադրութիւնն որու սակայն՝
Ո՛չ ոք գիտէ. բայց որ տաժանքն
Հսպասումին, սարսափն անգո՛ւթ
Անորոշին, մարդն առաւել
Կ'ընեն թըշուառ, եւ գաղափարն
Այլ հուսկ մահուան
Շատ աւելի տաժանելի
Քան մա'հն ինքնի'ն:
Քաղցկեղ է այս!

ԱՆԵԼ